Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 01.03.2022թվականի <<2022 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 36-Ն որոշմանը կից թիվ 1, 2, 3 և 4 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին>> որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2022 թվականի համայնքի բյուջեում փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքում նոր ծրագրերի իրականացման նախաձեռնությամբ և առաջացած խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

2. **Առկա խնդիրների նկարագրությունը**

Համայնքի բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովման, համայնքային ենթակառուցվածքների արդիականացման, բնակչության կենսական շահերի ապահովման նպատակով Մասիս համայնքում առկա խնդիրների վերաբերյալ համայնքապետարանի համապատասխան բաժինների և վարչական ղեկավարների կողմից ստացված բազմաթիվ հաղորդումների ուսումնասիրությունից պարզվել է, որ անհրաժեշտ է բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

Վարչական բյուջեի եկամտային մասում Ջրահովիտ վարչական տարածքի պլանային ցուցանիշների ճշգրտման արդյունքում շենք, շինությունների գույքահարկը անհրաժեշտ է նվազեցնել՝ գույքահարկ ֆիզիկական անձանցից՝ 163.2 հազար դրամով, գույքահարկ իրավաբանական անձանցից 67.3 հազար դրամով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 1099.0 հազար դրամով:

Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքեր վճարողների հաշվառման ճշգրտման արդյունքում անհրաժեշտ է նվազեցնել "Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար,, նախատեսված պլանային ցուցանիշը 50.0 հազար դրամով:

Տեղական տուրքերից եկամուտների ավելացում է նախատեսվում՝

Համայնքի վարչ. տարածքում խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար՝ 3600.0 հազար դրամ

Համայնքի վարչ. տարածքում խանութներում և կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվ. համար՝ 460.0 հազար դրամ

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվ. համար՝ 300.0հազար դրամ

Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվ. համար՝ 650.0 հազար դրամ

Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ 100.0 հազար դրամ

Ընդհանուր եկամուտների նվազեցումների և ավելացումների արդյունքում վարչական բյուջեի եկամուտները կավելանան 3730.5 հազար դրամով:

Համայնքի վերակազմակերպմամբ պայմանավորված որոշակի ծախսատեսակներ՝ կապի, էներգետիկ և կոմունալ ծառայությունների գծով, որոնք իրականացվել են տարեսկզբին նախկին համայնքապետարանների կողմից, անհրաժեշտ է ներառել բյուջեում, ինչպես նաև ընթացիկ շարունակական ծախսերից անհրաժեշտություն կա ավելացնելու գրենական պիտույքների, մաքրիչ նյութերի և տնտեսական ապրանքների ձեռք բերման, կապի և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը: ընդհանուր ծառայությունների ձեռք բերման ծախսերը կավելանան 10684,0 հազար դրամով:

Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գույքի ձեռք բերման համար բյուջեի վարչական մասից անհրաժեշտ է հատկացնել 515.0հազար դրամ

Համայնքում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին աջակցելու համար նախատեսվում է բյուջեից հատկացնել 6.0 մլն դրամ:

Համայնքի Նոր Խարբերդ, Այնթապ և Նոր Կյուրին բնակավայրերի դպրոցականներին տեղափոխող տրանսպորտների վարորդները դիմել են աշխատավարձի բարձրացման խնդրանքով՝ կապված տրանսպորտային վառելիքի, քսայուղերի թանկացման հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարորդներին իրենց սեփական տրանսպորտով կատարած ծառայության դիմաց վճարվում է միայն աշխատավարձ, առաջարկվում է վարորդների ամսական աշխատավարձը սույն թվականի սեպտեմբերի 1-ից սահմանել Այնթապ գյուղի վարորդի համար՝ 195000դրամ, Նոր Խարբերդ և Նոր Կյուրն գյուղերի վարորդների համար 130000 դրամ:

Ֆոնդային բյուջեում անհրաժեշտ է ավելացնել Այնթապ համայնքի կողմից փողոցների լուսավորության ցանցի կառուցման համար տարեսկզբին վճարված սուբվենցիոն ծրագրով եկամուտները և ծախսերը 8310.0 հազար դրամ:

Համայնքային մի շարք ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել մի շարք փորձաքննություն անցած նախագծա-նախահաշվային աշխատանքներ՝ 3760.0 հազար դրամի /ցանկը տեղեկանքում/,

Մասիս քաղաքի 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների համար նախատեսված միջոցները անհրաժեշտ է նվազեցնել 4400.0 հազար դրամով, գնման պահանջը վերանալու պատճառով

Մասիս համայնքի Նորամարգ գյուղի թվով 5 պոմպերի հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների համար անհրաժեշտ է 1331.1 հազար դրամ

Մասիս համայնքի Դարակերտ գյուղի Կենտրոնական փողոցում հետիոտնային անցումների կառուցման և կահավորման աշխատանքների համար անհրաժեշտ է 1973.3 հազար դրամ:

Վարչական սարքավորումներ, սարքեր ձեռք բերելու համար անհրաժեշտ է ընդհանուր 135 018.2 հազար դրամ, որից՝

Համայնքապետարանի շենքում ցանցային համակարգի կառուցման համար՝ 22600.0 հազար դրամ

Վարչական տարածքներում տեսահսկման համակարգի տեղադրման համար՝ 29985.0 հազար դրամ

Ավագանու նիստերի դահլիճում կոնֆերանս համակարգի ներդրման համար՝ 15128.0 հազար դրամ

Արգավանդ գյուղի դպրոցի մոտ դեղին թարթող լուսացույցի ձեռք բերման և տեղադրման համար՝ 148.6 հազար դրամ

Մասիս քաղաքի Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գույքի ձեռք բերման համար՝ 4886.0 հազար դրամ

Համայնքում աղբահանության որակը բարելավելու նպատակով 280 հատ աղբամանների ձեռք բերման համար՝ 61600.0 հազար դրամ

Մասիս քաղաքի Նոր թաղամաս 7-րդ շենքի բակում տաղավարի ձեռք բերման և տեղադրման համար ՝ 670.6 հազար դրամ:

Ստորև ներկայացվում է տեղեկանքը եկամուտների և ծախսերի վերաբերյալ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի վարչական մասում ծախսերի նվազեցումների և ավելացումների

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Ծախսեր / հազար դրամ/	Եկամուտներ /հազար դրամ/
				Եկամուտների նվազեցում			
1				Գույքահարկ ֆիզիկական անձանցից /Ջրահովիտ վարչական տարածք/			-163,2
2				Գույքահարկ իրավաբանական անձանցից /Ջրահովիտ վարչական տարածք/			-67,3
3				Այլ գույքի վարձակալությունից եկամուտներ /Ջրահովիտ վարչական տարածք/			-1099,0
4				Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար /Ք.Մասիս/			-50,0
				Եկամուտների ավելացում			
5				Համայնքի վարչ. տարածքում խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար			3600,0
6				Համայնքի վարչ. տարածքում խանութ-ում և կրպակ-երում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվ. համար			460,0
7				Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար			300,0
8				Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար			650,0
9				Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար			100,0
				Ծախսեր			

10	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածը նվազեցնել	4239	-13468,50	
11	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Ինտերնետ կապի ծառայություն	4214	50,00	
12				Բջջային կապի ծառայություն	4214	100,00	
13				Գրենական պիտույքներ	4261	470,00	
14				Տնտեսական ապրանքներ և մաքրիչ նյութեր	4267	360,00	
15	01	3	1	**Աշխատակազմի գծով ընդհանուր բնույթի ծառայություններ.** ՔԿԱԳ-ի էներգետիկ ծառայություններ	4212	20,00	
16	01	3	3	**Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ.** Համակարգչային ծառայություններ հոդվածը ավելացնել՝ գույքահարկի ավտոմատացված համակարգի սպասարկման համար	4232	75,00	
17	04	2	1	**Գյուղատնտեսություն.** Էներգետիկ ծառայություններ հոդվածն ավելացնել՝ խորքային հորերի էներգետիկ ծախսերի համար	4212	4500,00	
18	05	1	1	**Աղբահանություն.** Տարեսկզբին փաստացի կատարված ծախսերը բյուջեում ներառելու համար Աղբահանության ծառայության հոդվածով նախատեսված միջոցները ավելացնել	4213	4284,00	
19	05	6	1	**Կանաչ տարածքների խնամում և հիմնում.** Տարեսկզբին փաստացի կատարված ծախսերը բյուջեում ներառելու համար այլ կոմունալ ծառայություններ հոդվածով նախատեսված միջոցները ավելացնել	4213	825,00	
20	09	1	1	**Նախադպրոցական կրթության ծառայություն.** Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռք բերում	4261	515,000	
21	09	2	2	**Միջնակարգ ընդհանուր կրթություն.** Աջակցություն համայնքում գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին	4819	6 000,000	
				Ընդամենը		***3 730,50***	***3 730,50***

2022 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերի փոփոխությունների արդյունքում բյուջեի եկամուտները և ծախսերը կավելանան 3730,5 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի ֆոնդային մասում ծախսերի նվազեցումների և ավելացումների							
h/h	*բաժին*	*խումբ*	*դաս*	***Գործառական դասակարգում, նպատակ***	***հոդված***	***Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/***	***Մուտքեր /հազար դրամ/***
				Սուբվենցիա *Այնթապի լուսավորության ցանցի կառուցման համար*			***8310,00***
1	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** «Վարչական սարքավորումներ» հոդվածը նվազեցնել	5122	-137682,60	
				ՆԱԽԱԳԾԱ_ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ			
2	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս քաղաքի Նոր թաղամաս Շիրազի փողոց 2-րդ նրբանցքի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	500,000	
3				փորձաքննություն	5134	50,000	
4				Մասիս համայնքում լուսաֆորների, ճանապարհային նշանների տարատեղադրման և գծանշման սխեմայի ձեռք բերում	5134	2 000,000	
5	06	3	1	**Ջրամատակարարում և ջրահեռացում.** Սայաթ-Նովա գյուղի Նոր Թաղամաս 1-ին և 2-րդ փողոցների /1300գմ/ ջրագծերի հիմնանորոգման նախագաձա-նախահաշվային աշխատանքներ	5134	300,000	
6				փորձաքննություն	5134	30,000	

7	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Մասիս քաղաքի 5-րդ դպրոցին հարակից ֆուտբոլի դաշտի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների համար նախատեսված միջոցների նվազեցում	5134	-4 000,000	
8				փորձաքննություն	5134	-400,000	
9				Մասիս քաղաքի Արհեստական լճին հարակից տարածքի բարեկարգման, ոռոգման ցանցի անցկացման և լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	500,000	
10				փորձաքննություն	5134	50,000	
11	08	2	7	**Հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում.** Մասիս քաղաքում 3-րդ թաղամաս թիվ 11 շենքի բակում և Դարբնիկ գյուղում Ժորա Եսայանի անվան փողոցում հուշակոթողների կառուցման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	5134	300,000	
12				փորձաքննություն	5134	30,000	
				ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
13	04	2	4	**Ոռոգում.** Մասիս համայնքի Նորամարգ գյուղի թվով 5 պոմպերի հիմնանորոգում /լրացուցիչ համաձայնագրեր/	5113	1 331,100	
14	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Մասիս համայնքի Դարակերտ գյուղի Կենտրոնական փողոցում հետիոտնային անցումների կառուցման և կահավորման աշխատանքներ	5112	1 973,300	
15	06	4	1	**Փողոցների լուսավորություն.** Այնթապի լուսավորության ցանցի կառուցում	5112	8 310,000	
				ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ			
16	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Համայնքապետարանի շենքում ցանցային համակարգի կառուցում	5129	22 600,000	
17				Վարչական տարածքներում Տեսահսկման համակարգի տեղադրում	5129	29 985,000	
18				Ավագանու նիստերի դահլիճում Կոնֆերանս համակարգի ներդրում	5129	15 128,000	

19	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Արգավանդ գյուղի դպրոցի մոտ տեղադրելու համար դեղին թարող լուսացույցի ձեռք բերում	5122	148,600	
20	**09**	**1**	**1**	**Նախադպրոցական կրթության ծառայություն.** Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռք բերում	5122	4 886,000	
21	**05**	**1**	**1**	**Աղբահանում.** 280 հատ աղբամանների ձեռք բերում	5122	61 600,000	
22	**0 8**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Մասիս քաղաքի Նոր թաղամաս 7-րդ շենքի բակում տեղադրելու համար տաղավարի ձեռք բերում	5122	670,600	
				Ընդամենը		***8 310,000***	***8 310,000***

2022 թվականի բյուջեի ֆոնդային մասի փոփոխությունների արդյունքում ընդհանուր եկամուտները և ծախսերը կավելանան 8310,0հազար դրամով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ